Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1085[12]-06.10.2016-ՖՎ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (24 նոյեմբերի 2004 թվականի, ՀՕ-150) 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը «գործարքներից» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ֆոնդային բորսայում կնքված ածանցյալ ֆինանսական գործիքներից» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Ամփոփաթերթ

1-ին ընթերցմամբ ընդունված ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրա ընդունմամբ պայմանավորված այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի

N	Առաջարկության հեղինակը	հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դիրքորոշումը
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Քոքոբելյան (հնչեցվել է բանավոր նիստում՝ քննարկման ժամանակ)	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ և 6-րդ հոդվածներ	ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը նախատեսում է գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը... [Հոդվածում] չկա կետ, որը ուղղակիորեն սահմանափակում դնի՝ բացառությամբ, եթե դա այլ տեղում գրավադրված չէ կամ ինչ-որ այլ խնդիր [գոյություն ունի]: Մատնանշեցիք, որ սա…արժեթղթերին է վերաբերում: Սեփականության իրավունքի առումով … էական չէ, դա բնակարան է, թե 10 անգամ թանկ արժեթուղթ կամ բաժնեմաս, քան առանձնատունը: [Սա]	Հոդված 6-ը, որը լրացնում է ածանցյալ ֆինանսական գործարքներից բխող պարտավորության ապահովման համար գրավի արտադատական կարգով բռնագանձումը, լրամշակվել է: Հստակ նախատեսվել է, որ գրավի բռնագանձման առանձնահատուկ ռեժիմը տարածվում է **միայն ածանցյալ ֆինանսական գործարքներից** և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող գլխավոր համաձայնագրերի շրջանակում

			սեփականության իրավունքի նկատմամբ զարմանահրաշ երևույթ է, այն սահմանափակում է սեփականության անձեռնմխելիությունը, որը երաշխավորված է Սահմանադրությամբ:	կնքված գործարքներից (ռեպո) բխող պարտավորությունների ապահովման ժամանակ: Հարկ է նշել, որ լրացմշակված նախագծի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ գրավի առարկա են հանդիսանում ածանցյալ գործքիները և դրամական միջոցները: Հստակեցվել է նաև, որ այս ռեժիմը տարածվում է միայն այն դեպքերի վրա, երբ գործարքի ոչ մի կողմ ֆիզիկական անձ չէ: Հետևաբար խոսքը վերաբերում է միայն ֆինանսական շուկաներում առևտրային գործունեությամբ զբաղվող անձանց գիտակցված գործարքների մասին, որոնց կնքումը պայմանավորված է կողմերի՝ շահույթ ստանալու կամ ռիսկերը հեջավորելու նպատակով: